

# ՃԱԿԱՏԱԳՐԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆԱՐԱՐ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

*Posted on September 10, 2022 by Keghart*



Category: [Opinions](#)



**Վարդան Օսկանյան, Հայաստանի նախկին արտգործնախարար, [168.am](https://www.facebook.com/168.am), 30 2022**

Թերևս այլևս լրացուցիչ փաստերի կարիք չունենք արձանագրելու, որ Հայաստանի՝ 2018-ին ձևավորված իշխանությունները դիվանագիտության ու միջազգային հարաբերությունների մասին տարրական գիտելիքներից շատ հեռու էին ու շարունակում են այդպիսին մնալ: Չնայած դավադրությունների տեսություններին՝ ես շարունակում եմ վստահ լինել, որ հենց այդ հանգամանքն է մեր ունեցած և դեռ շարունակվող մարդկային ու տարածքային կորուստների հիմնական պատճառը:

Նիկոլ Փաշինյանի դիվանագիտական առաջին սխալն այն էր, որ նա երկրի ներսում նորաստեղծ իշխանությունների դիրքերը կայունացնելու և ամրացնելու համար Ալիևի հետ առաջնագծում չկրակելու համաձայնություն ձեռք բերեց, ինչը ադրբեջանական կողմը լիովին կատարեց:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե սա անմեղ, նույնիսկ հնարամիտ քայլ էր: Սակայն դա դիվանագիտական առաջին կոպիտ վրիպումն էր, որը և ադրբեջանական կողմի մոտ ձևավորեց սահմանին անդորրի դիմաց Հայաստանի կողմից կարճ ժամանակում զգալի զիջումների ակնկալիքներ:

Պատերազմների պատճառը մշտապես լինում է հակամարտող կողմերի ակնկալիքների հետևողական ձևավորումը և վերջում դրանց ձգձգումը, դրժումը կամ չբավարարումը:

Փաշինյանի երկրորդ սխալն այն էր, որ նա ամբողջությամբ արհամարիեց մինչ այդ եղած բանակցային բոլոր փուլերը և համապատասխան փաստաթղթերը՝ հայտարարելով, թե բանակցություններն սկսելու է իր գրոյական կետից: Սա հենց Ադրբեջանի ցանկությունն էր, ինչը հնարավորություն էր ստեղծում ձերբազատվելու իր համար բանակցային փաստաթղթերում տեղ գտած անցանկալի, բայց միջնորդների կողմից ընդունված դրույթներից և հիմնարար սկզբունքներից, ինչպես օրինակ՝ Արցախի ինքնորոշման իրավունքից՝ միաժամանակ ի ցույց դնելով միջնորդներին և ավելի լայն շրջանակի երկրներին հայկական կողմի անլրջությունը և անվստահելիությունը ձեռք բերված պայմանավորվածությունների նկատմամբ:

Փաշինյանի երրորդ դիվանագիտական ձախողումը նրա՝ մի կողմից Ղարաբաղյան հարցում հստակ դիրքորոշման ու քաղաքականության բացակայությունն էին, մյուս կողմից՝ այդ հարցում իրարամերժ ու հակասական հայտարարությունները: Սկզբում անորոշ և քառսային մտքեր, հետո՝ պնդումը, թե հարցի լուծումը պետք է ընդունելի լինի Հայաստանի, Արցախի և Ադրբեջանի ժողովուրդների համար: Եվ վերջապես՝ «Արցախը Հայաստան է և վերջ» արտահայտությունը: Ես կարծում եմ՝ նրա հենց այս մտքերի խորը հակասություններն էին, որ Ադրբեջանին առիթ տվեցին պատճառաբանելու բանակցային ճանապարհով հարցը լուծելու անհնարինությունը և որոշակիորեն արդարացնելու պատերազմի հրահրումը:

Չկա պատերազմ, որից հնարավոր չէ խուսափել: Հակառակի պնդումը քաղաքական անգործությունն ու անգործությունն արդարացնող կեղծ ու վտանգավոր կանխավարկած է: Եթե սկսվել է պատերազմ, որից մենք կուզեինք խուսափել, ուրեմն Հայաստանի ղեկավարությունը սխալվել է քաղաքական պարզ հաշվարկներում և ծախողել է բանակցային գործընթացում:

Դժբախտաբար, այս միտումը և դիվանագիտական սխալների շքերթը շարունակվում է՝ մեզ պատճառելով նորանոր, բայց միանշանակ խուսափելի մարդկային և տարածքային կորուստներ:

Ուժի առաջ անգոր լինելու ճակատագրապաշտութիւնը (ֆատալիզմը) և դիվանագիտական տարրական հմտության բացակայությունը հանգեցնում է՝ «ամեն ինչին համաձայնենք, պրծնենք» մտածողությանը: Այլ կերպ հնարավոր չէ բացատրել, թե ինչպես կարելի էր հետպատերազմյան շրջանում Ադրբեյջանի առաջարկած հետագա բանակցային օրակարգի հինգ կետերը միանգամից՝ վարչապետի և արտգործնախարարի մակարդակով՝ առանց անգամ բանակցություններ սկսելու, ամբողջությամբ ընդունելի համարել:

Մինչդեռ պատասխանը կարող էր շատ պարզ ձևակերպվել ի շահ Հայաստանի: Մոտավորապես այսպես.

«Ձեր իրավունքն է բանակցային օրակարգ բերել ցանկացած հարց, և հայկական կողմը չի խուսափելու դրանք քննարկելուց: Ուստի ելնելով նույն տրամաբանությունից և ունենալով նման ակնկալիք ձեզանից՝ ներկայացնում ենք հայկական կողմի օրակարգային հարցերը.

- ԼՂԻՄ-ի ապագա կարգավիճակը,
- Շուշիի և Հադրութի ճակատագիրը՝ որպես ԼՂԻՄ-ի անբաժանելի մաս,
- Ադրբեյջանում պահվող հայ ռազմագերիների վերադարձի հարցը,
- ադրբեյջանական զինված ուժերի դուրսբերումը Հայաստանի ինքնիշխան տարածքից,
- Մինսկի խմբի բանակցային ձևաչափի վերականգնման հնարավորությունը,
- Ղարաբաղում տեղակայված խաղաղապահ ուժերի ժամկետների հարցը,
- այլ հարցեր»:

Առաջարկված այս օրակարգում չկա որևէ հարց, որը կարող է հարուցել դիվանագիտական և ռազմական անսպասելի հակազդեցություն: Այս օրակարգը միանշանակ հասկանալի և ընկալելի է միջնորդ կողմերին: Սրա բացակայությունն է, որ զարմանք է առաջացնում բոլոր նրանց մոտ, ովքեր դեռ չեն հավատում, որ նույնիսկ սա ձևակերպելու հմտություն ներկա իշխանությունը չունի:

Այսօր հայկական դիվանագիտության առաջնային խնդիրն է հավասարակշռված օրակարգով մտնել երկարատև բանակցությունների մեջ:

Դիվանագիտությունը անվերջ հնարավորությունների հարթակ է: Ամենաանհույս

իրավիճակներում անգամ հնարավոր է ինչ-որ բան շտկել, սրբագրել:

Ճակատագրապաշտութիւնը իրական անգործության հետ առնչություն չունի: Դա հմտությունների, գիտելիքների, փորձի բացակայության և սեփական սխալները չընդունելու, խորհուրդներին ականջալուր չլինելու համառության համադրությունն է: Հենց սրան ենք արդեն երեք տարուց ավելի ականատես լինում: Ու բացառապես սրա արդյունքում ենք բախվում անվերջանալի կորուստների:

**Նկարը` ՀՀ-ի Արտգործ նախարարութեան նախկին շէնքը**

## Comments



**Vahe Hayrikian** – 2022-11-18 13:20:25

Dear Vartan Oskanian, You described exactly what happens to our country as a result of inexperienced people governing our nation. People like Loucik still singing Pashinyan songs without realizing the tragedy in which we are living in!



**Vahe Hayrikian** – 2022-09-11 00:53:14

Dear Vartan Oskanian, You described exactly what happens to our country as a result of inexperienced people governing our nation. People like Loucik still singing Pashinyan songs without realizing the tragedy in which we are living!



**Luluhi** – 2022-09-10 09:14:49

Պարոն Օսկանյան համամիտ լինելով ձեր կողմից առաջարկված ազիկներին առաջադրելու օրակարգային կետերի հետ, ուզում եմ նաև ասել, որ դուք եք եղել այն արտգործ նախարարը, որի օրոք մենք կնքեցինք մի շարք պայմանագրեր ի օգուտ ազիկստանի, ընդ որում համաձայն էիք Մեդրին տալու Լաչինի ինչ որ փոքր ճանապարհ դիմաց՝ առանց Արցախի կարգավիճակի հստակեցման: Ձեր օրոք չէ՞ր, որ քոչարյանը մեր երկրի ռազմավարական անօտարելի օբյեկտները "նվիրեց" պուտինին, իր գրպանի պարունակությունը միանգամից հազարապատկելով ու մարդկանց մոտ երկրի հարստացման ու զարգացման իմիտացիա ստեղծելով: Կարող եմ էլի մի շարք "խելացի ու դիվանագիտական" քայլեր մատնանշել ձեր պաշտոնավարման տարիներից, որով դուք ու ձեզ կառավարող անձը ժողովրդին հասցրեցիք արտագաղթի, բանակը ոտաբոբիկ ու անզեն թողնեցիք, Արցախի շուրջ եղած մեր պատմական հայրենիքում ոչ մի քար քարին չդրեցիք, քանի որ արդեն խոստացել էիք այն հանձնել ազիկներին, մտցրեցիք կաշառակերություն ու ծախվելու բարքեր ..... մի խոսքով շատ ծանր մեղքեր, որի պատճառով էլ մենք պարտվեցինք